

չառին այդ զօրութիւնը՝ որ կար միշտ, և որուն կարօտ էին միշտ: Եւ չէ կարելի ըմբռնել՝ թէ անոնք զՔաղկեդոն մերժելով սկիզբէն, կրնային նախ կրօնական միութեան մէջ մնալ քաղկեդոնական Յուսաց հետ այնքան ժամանակ, և յետոյ

խզուիլ նոյն խնդրոյն պատճառաւ: Հակասական և անտեղի կը լինէր իրենց ընթացքը: Օրմանեանի այս մտքի խաղը, ստեղծուած զրասեղանին առջեւ, սահմանուած է մնալու միշտ մտքի խաղ, ոչ պատմութիւն:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ ԿԱՄԵՆԻՑԷՆ ՖԻԼԻՊԷ

(1670-74)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱԿԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ

ԲԱԶՄԱՎԵՊԻ¹ մէջ Ապրօ Չէլէպիի կենսագրութիւնը վերջացնելէս առաջ խոստացայ հրատարակել նաև պուլկարահայոց պատմութեան համար շահեկան՝ մանաւանդ Ֆիլիպէի հայոց համար կարեոր մէկ երկու հին վաւերագրութիւն: Ասոնցմէ առաջինին կարեորութիւնը կ'ուզեմ շեշտել հոս, յարգելի ընթերցողիս ուշադրութեան յանձնելով սոյն քանի մը տողերս:

Հանդէս Ամսօրեայի² մէջ երբ Հ. Գալէմբեարեան «Պէյօղլուի Գերեզմանատան» իր Պատմութեան ընթացքին կը գրէր Էրեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի մասին, ստորին լուսանցքին վրայ կ'աւելցնէր թէ Էրեմիա Չէլէպիի 1670ական թուականներուն զրաժ Ռումելիի Հայոց յանգաւորեալ, բազմատողեայ պատմութիւնը՝ այժմ դժբախտաբար կորսուած է: — Արդ ուրախ եմ ըսելու որ սոյն պատմագրութիւնը տետրակի մը մէջ ամբողջութեամբ կը գտնուի, որմէ համառօտադրեալ է սոյն վաւերագրութիւնս:

Բնագիր տետրակին Ա. մասը կը պատկանի Ֆիլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյն հայեւրէզ գրաւման և առաջին անգամ վերանորոգման, իսկ երկրորդ մասը լիակատար պատմութիւնն է հայոց 1671ին կամենիցէն փախուստին և երեք նաւերով

Սև ծովի վրայ թափառելնուն, որոնցմէ մէկ մասը հուսկ յետոյ կու գայ հաստատուիլ Ֆիլիպէ ու 1675ին Ս. Գէորգ մատուին տիրանալ:

Սոյն բնագիրը ձեռք անցնելէ առաջ Ֆիլիպէի հայ հնութիւններով զբաղած ատենս եկեղեցւոյ զրբերուն մէջ գտայ ձեռագիր «Ստորագրութիւն սուրբ եկեղեցւոյս» անուն 12 թերթեայ տետրակ մը՝ խնամքով զրուած: Տետրակիս կէսը նուիրուած է 1828ին Ֆիլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյն նորոգման նկարագրութեան, իսկ միւս կէսը համառօտագրութիւնն է «Էրեմիա» անուն մէկու մը գործին—որուն բնագիրը ինչպէս ըսինք ձեռք անցուցի վերջը:

Այս «Էրեմիան» ուրիշ մէկը չէ բայց եթէ Էրեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, մտերիմ բարեկամը Ապրօ Չէլէպիի: Ան աւանտես և ականջալուր վկան եղած է այդ դէպքերուն:

Հոս կու տանք համառօտագրութիւնը՝ որ ինքնին արդէն երկար է ըստ բաւականին:

«Ստորագրութիւն սուրբ եկեղեցւոյն» հատերիկը խիստ մեծ խնամքով կը պահուէր Ս. Գէորգի եկեղեցւոյն մէջ ի Ֆիլիպէ:

Սոյն և միւս պատմական վաւերագրութիւնները, որոնք Պուլկարահայոց պատմութեան համար առատ և շահեկան նիւթեր են, հետզհետէ կը խոստանամ հրատարակել:

1. Բզմ. 1926, էջ 42:

2. Հանդ. Ամս. 1911, էջ 474: